ՀՏԴ 82.176(479.223)

ՀԱՅՐԵՆԱՃԱՆԱՉՄԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԱՐՑԱԽՅԱՆ ԼԻՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ. ՍԱՐԳԻՍ ՋԱԼԱԼՅԱՆՑ, «ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ Ի ՄԵԾՆ ՀԱՅԱՍՏԱՆ»

Զինաիդա Բալայան
բ.գ.թ., դոցենտ
Արցախի Պետական Համալսարան

Անոտացիա

Ս. Արքեպիսկոպոս Ջալալյանցի հեղինակած սկզբնաղբյուրի ու պատմական-գրականագիտական-ազգագրական, գրական, քաղաքական խիստ կարևոր փաստաթղթի արժեք ներկայացնող «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» (հ.1-1842, հ. 2- 1858) երկը, բավականին հարուստ նյութեր է պարունակում հայ ժողովրդի ու նրա մաս կազմող Արցախի մելիքությունների, մելիքական տների, հոգևոր և աշխարհիկ հայրենանվեր գործիչների ու նրանց բեղուն գործունեության, Արցախի պատմության, գրականության, աշխարհագրության, բանահյուսական երկերի, ավանդությունների, հասարակական, քաղաքական, հրատարակչական ու հոգևոր կյանքի, արարչագործ էության, ու քաջության, մենթալիտետի (մտախառնվածքի), գեղագիտական ընկալումների, մեծ ազատասիրության և այլնի մասին:

Բանալի բառեր: *«Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» Արցախի գրականությունը, Աղվանից աշխարհի արքա Վաչականը, Գանձասար, Շուշիի Ղազանչեցոց եկեղեցին:*

Հայ գրականության, պատմության, մշակույթի, հայոց ազգային գաղափարաբանության, հայոց պետական մտածողության, ազգային փիլիսոփայության մեջ ի±նչ առանձնահատկություն ուներ XIX դարը, ի±նչ բերեց այն իր հետ: Հայ իրականության մեջ դարասկզբից սկսած (որոշ առումներով՝ XVIII դարը շարունակող) ի հայտ եկան աննկուն, ազգային գաղափարների թասից իրենց ծարավը հագեցնող և սնվող, մրրկաշունչ հոգու ու քանքարաշատ մտքի տեր անհատներ, որոնց նպատակն էր՝ կրթել ու դաստիարակել հայ երիտասարդներին հայ ազգային ոգով, սնել նրանց հայ ազգային գաղափարաբանությամբ՝ փիլիսոփայական ընդհանրացումներով, հայրենիքը ճանաչելի դարձնելու մտահանգմամբ, հայոց պետականությունը վերակերտելու, վերագտնելու, հայոց սահմանները վերագծելու տեսլականով ու այն իրականություն դարձնելու ուխտով, որոնք ուղենիշ ձող կդառնային ու հիմնականում դարձան նրանց ճանապարհին:

Այդ ժամանակաշրջանում ազգային գաղափարներով ճախրող ու իրենց որդեգրած գաղափարներով առանձնացող անհատների մասին Համլետ Դավթյանն իրավամբ գրում է. «Անուններ էին հոլովվում, որոնք արդեն բոլորովին ուրիշ բան էին ասում հայ մարդուն, մաքրում էին նրա աչքին պատած փառը, դուրս էին բերում հոգին անձավախցային կեղծ աշխարհից, ոգի էին տալիս ու հայրենի երկնքում արծվի ճախրանքն էին օրինակ դարձնում նրա համար: Այդ հզոր ու արի հայորդիների համար անտանելի ու աններելի էր դարձել հայոց թշվառությունն ու խեղճությունը: Չկար, չէր գալիս Խաչյալից սպասվող փրկությունը, խաչը կորցրել էր իր

փրկչական զորությունը և վաղուց արդեն կենաց նշան չէր հայի համար: Հայը մոլորյալ էր ու ցուպը ձեռքին դեգերող» [1. էջ 10] :

Կարևորելով հայ ժողովրդի կյանքում սեփական պետականություն ունենալու գերխնդիրն ու նրա նշանակությունը, ցավ հայտնելով այդ նույն պետականության կորստի համար և նկատի ունենալով հայ ժողովրդի կյանքում առկա ողբերգականությունը՝ իրական հայրենիքը անիրական հայրենիքով փոխարինելու որդեգրած տխուր փաստը ու… այդ ամենից բխող քաղաքական ծանր հետևանքները, պատմաբանը դառնությամբ ավելացնում է. «Հարուստն ու իշխանավորն անգամ չքավոր էին, որովհետև անտեր ու անտուն էին: Որովհետև տունը կառուցում են սեփական հողի վրա…. Իր տունն իրենը չէր, իր հայրենիքն իրենը չէր, նա մոռացել էր, որ հող ու տուն ունի, կարծում էր, թե միայն խաչն է իրենը: Երկրային դրախտը երկնային դրախտով…. փոխարինելու, երկրային այլադավան տերերին հլու հնազանդվելու, իսկ երկնային Տիրոջ նույնադավան փոխանորդներին մինչև անգամ ինչքն ու հարազատ զավակների կյանքը հոժարակամորեն նվիրաբերելու միալար քարոզը բթացրել էր հայի զգացմունքները, մոլորեցրել նրա միտքը: Նա վաղուց դարձել էր հլու-հնազանդ մի գոյ…. Վաղուց արդեն հայն իր նախնյաց երկիրն ամբողջապես, առանց պակասորդի չէր ընկալում. նրա պատկերացրածն իր գյուղը կամ քաղաքն էր՝ շրջակայքով, եթե ավելին, ապա գավառը, հետևաբար՝ արցախցու համար Կարինն օտարություն էր, վանեցու համար Երևանը՝ ռսի տարածք: Հայություն կար՝ Հայաստան չկար, ավելին, Հայաստանն առհասարակ անհետանում էր, դառնում էր Վրաստան, Ռուսաստան, Պարսկաստան, Թուրքիա» [2, էջ 10-11] :

Իսկ Ջալալյանցի անհանգստությունն ավելին էր, քան սպասելի էր ժամանակաշրջանի ուսյալ շատ մարդկանցից, հոգևոր և աշխարհիկ շատ տերերից, շատ առաջնորդներից: «…Եւ այս վիշտը,- գրում է Ջալալյանցը,- հոգու այս անտանելի վերքը, [որ ունեմ] ազգակիցներիս [այսպիսի վիճակի համար], ստիպեց ինձ շրջագայել Մեծ Հայաստանով և ամենայն ճշգրտությամբ ընդօրինակել եկեղեցիների, վանքերի, բերդերի և պալատների պատերի ու պարիսպների արձանագրությունները և ներկայացնել մեր ազգին….» [3, էջ 23-24]:

Այսպիսի խեղճության, լքվածության, անորոշության կողքին երևան են գալիս առանձնադիտվող, խանդավառ, ուսյալ հայեր՝ աշխարհիկ և հոգևոր ասպարեզներից, ովքեր նպատակադրվեցին ազգային զարթոնք նախապատրաստել, ազգային մտածողություն ձևավորել, ազգային գործելաոճ, ազգօգուտ գաղափարակարգ ստեղծել, քանզի կրոնահամայնքային մտածելակերպն այլևս հայի համար փրկության փարոս չէր կարող լինել, համաշխարհային զարգացումներին զուգահեռ հայն այլևս հին խեղճության, լքվածության, անորոշության մեջ չէր կարող և չէր կարելի այդ ձևով ապրեր…

Մտավոր շարժման ռահվիրաների նպատակ ծրագրերում, որպես ամենաարդյունավետ տեսակ, դերակատարություն ունեցավ ուղեգրության ժանրը:

Նրանք՝ միշտ իրարից անկախ, շրջում էին երկրի տարբեր վայրեր, գրի առնում տեսած ու լսած ամեն մի փաստ, նկարագրում հայրենիքից հեռու հայ մարդուն բաժին հասած անմխիթար ճակատագիրն՝ իր բոլոր բարդություններով, և Հայոց աշխարհին վերաբերող ամեն մի վիպական, պատմական, քաղաքական, աշխարհագրական, հոգևոր անդրադարձ, ներքին հպարտությամբ, բայց վշտակից հոգով՝ քննողաբար ներկայացնում իրենց աշխատանքներում:

Այսպիսով, մտավոր շարժման ոգեկիրները, եկեղեցական, աշխարհիկ կառույցներին վերաբերող յուրաքանչյուր անդրադարձ հայրենաճանաչության հետ կապելով, ստեղծել են հզորությամբ, պայծառությամբ փայլող, երբեմնի Հայոց աշխարհի սիրելի պատկերը:

Մտավոր շարժման անհատներից յուրաքանչյուրն առաջինն էր իր տեսակի մեջ, տարբերվում էր իր բարձրացրած ձայնով, իր եռանդով, ուներ ստեղծագործելու իր ոճը, աշխարհագրական իր լանդշաֆտը, նկարագրելու իր տիպաբանական սկզբունքները, լեզվական առանձնահատկությունները, յուրաքանչյուրն էլ իր հերթին՝ քնարական-քաղաքական-քննական անդրադարձով, ներկայացնում էր իր խոհափիլիսոփայությունը՝ Արցախի ու արցախահայության նկարագրի, ստեղծագործական ներաշխարհի, հայրենի ավանդների ու ազգային խառնվածքային գծերի, հայրենապաշտ հոգու վերաբերյալ: Նրանցից յուրաքանչյուրի ուղեգրության էջերից հորդում էր հայրենաբաղձության ու հայրենադարձության ազգային երակ ստացած գաղափարակարգը, որի ոսկե երիզը ինքնիշխանության ու պետականության, հայոց թագի վերականգնումն էր:

Հայրենիքը Ջալալյանց երիտասարդ հոգևորականի համար իր նախնիների բզկտված սրբավայրերն էին՝ պետականությունից, ինքնիշխանությունից, հոգևոր կենտրոններից զրկված, աշխարհով մեկ սփռված, հիմնաբնից կտրված հայության բեկորները: Այդ էր պատճառը, որ Սարգիս Ջալալյանցը, տոգորված հայրենիքին օգտակար լինելու, նրան մոռացության փոշուց թոթափելու, հայրենաճանաչ դարձնելու, գաղափարապես զինելու, Հայրենիքի պատկերը պետականորեն վերակերտելու զգացումներով, մտահոգություններով շրջագայում է Արևելյան Հայաստանի գավառներում, կատարում տեղագրական-հետազոտական աշխատանքներ՝ ուսումնասիրում հայրենի հնություններն ու բնակավայրերը՝ ավերակ բերդերն ու ամրոցները, գյուղերն ու քաղաքները, ընդօրինակում եկեղեցիներում, այլ սրբավայրերում պատերի վրա պահպանված վիմագիր արձանագրություններ, ձեռագիր մատյաններ, ծխամատյաններ, հայսմավուրքներ, տարբեր վայրերում պահպանված հիշատականներ, գրի առնում կենդանի մարդկանց մոտ պահպանված ավանդություններ, հայրենի սրբությունների մասին պահպանված հիշողության պատառիկներ:

Իր կատարած ծանրածանր ճանապարհորդությունների արդյունքում, ի մի բերելով ձեռքի տակ հավաքված ամբողջական նյութերը, Սարգիս Ջալալյանցը 1842 թ. Տփխիսում՝ Թիֆլիսում, հրատարակում է «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» գիրքը: Դրանք սովորական ճանապարհորդական գրառումներ չէին: Իր ձեռնարկած նպատակի մեջ լինելով առաջինը՝ հեղինակը, փոխելով հավաքված նյութի ճանաչողական բնույթը, այն դարձրեց գաղափարապես հասուն հայրենագիտություն, հայ մարդուն զինեց գիտելիքներով, ցույց տվեց իր հայրենիքի իսկական նկարագիրը, անհրաժեշտաբար գծեց հայրենի եզերքի սահմանը, որը, ցավոք սրտի պետականության կորստի հետ, մոռացության էր տրվել ամենակուլ ժամանակի կողմից: Դժբախտաբար, Ջալալյանցը ազգային տարածքները նշում էր, հաշվի առնելով և պայմանավորվելով հայոց խիտ ու հավաք աշխարհագրական բնակության տեղերով միայն, որովհետև հային ժառանգություն մնացել է որևէ եկեղեցական կալվածք, հոգևոր կենտրոն, ինչպես օրինակ՝ Դիզակի Գտչավանքն ուներ 33 գյուղ և այլն:

Ս. Ջալալյանցի ուղեգրության ժանրին պատկանող «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» երկը հետաքրքիր բնույթ, արտահայտման տարբեր եղանակներ ու երանգներ ունի՝ նկարագրական, գեղարվեստական, տեղեկատվական, փիլիսոփայական, աստվածաբանական, հոգևոր, բանահյուսական, հայրենագիտական, եկեղեցական, գիտաճանաչողական, աշխարհաքաղաքական: Բայց ամենակարևորն ու առացքայինն այլ է. հեղինակն այդ ամենին համաքայլ՝ երկի սկզբից մինչև վերջ, մի կարմիր գիծ է անցկացնում՝ դարձնելով այն գերակա, առաջնային խնդիր. դա ազգային գաղափարաբանության-գաղափարախոսության տեսլականն ու երևույթականն էր՝ որպես պետականամետ մտածող հայ մարդու ներքին

նպատակադրություն, սիլլոգիզմի՝ պատճառա հետևանքային կապի ազգային դրսևորում, ցպահանջ մտահանգում, ներքին խորհուրդ, որն երևում է գրքի ամբողջ ընթերցանության ժամանակ՝ դառնալով ազգային մտասևեռուն գաղափար:

Անչափ կարևոր գեղարվեստական ու պատմական, քաղաքական, փիլիսոփայական, ազգային գաղափարաբանություն հետապնդող խնդիր է առաջադրել հեղինակը՝ ելնելով սխրանքի, հանդես գալով իբրև մարտիկ, առաջադրելով ազգային սահման ունենալու գիտակցությունը. այսպիսով այն ներկայացնելով որպես պետական մտածողության ձևավորման ատաղձ, հիմնաքար, գցելով առաջին սերմը՝ դառնալով սերմնացան ու շեփորահար, որն արթնացման էր տանում սփռված հայությանը:

Ավելին, Ս. Ջալալյանցի՝ հայրենի սահմանների գաղափարի առաջքաշման մասին խիզախումը, և ընդհանրապես ամբողջությամբ «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» մոնումենտալ երկը, հայ մարդու համար XIX դ. ոչ միայն Հայոց երկրի աշխարհաճանաչման ըմբռնում է բերում, այլև XX-XXI դդ.՝ գրականագիտական, ճանաչողական, քաղաքական, դաստիարակչական, գաղափարարաբանական բացառիկ նշանակություն է ստանում, արդիական հնչեղություն, քանի որ բոլշևիկյան Ռուսաստանն ավելի վատթար քաղաքականություն վարելով, քան ցարական Ռուսաստանը, կամայականորեն վերաձևել է ՀՀ պետական սահմանները՝ հօգուտ հարևան նորաթուխ Ադրբեջանի, ՀՀ անջատելով Արցախը, Նախիջևանը եւ միացնելով Ադրբեջանին, իսկ Արևմտյան Հայաստանի տարածքների մի մասը՝ Թուրքիային: Արցախյան պատերազմի ընթացքում, քաղաքական ճիշտ կարգավորման հասավ այդ գործընթացը. Արցախը դուրս եկավ Ադրբեջանի ենթակայությունից և դարձավ ինքնուրույն Հանրապետություն:

Ս. Ջալալյանցի «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» (հ.1-1842, հ. 2- 1858) երկը, որն իրենից սկզբնաղբյուրի՝ հայ ժողովրդի պատմության մասին հյուսված, խիստ կարևոր գիտական փաստաթղթի արժեք է ներկայացնում, անշուշտ բավականին հարուստ նյութեր է պարունակում նաև Հայոց աշխարհի տասերորդ նահանգի՝ Արցախի միջնադարյան պատմության ու նրա որոգայթներով, խիզախումներով, անկումներով, հերոսական պայքարով լի քաղաքական ճակատագրի մասին, Խամսայի մելիքների ու մելիքական տների, նրանց սահմանների մասին, հոգևոր իշխանապետության՝ Աղվանից աշխարհի կաթողիկոսական տան, սրբավայրերի, եկեղեցաշինության, տեղագրության, աշխարհագրության, հասարակական, քաղաքական, հոգևոր կյանքի մասին, Ղարաբաղի անօրեն խաների գործած խարդավանքներին ու քաղաքական հետապնդումներին զոհ դարձած մելիքների, արցախահայության ու նրա ստեղծած մշակութային բարձր արժեքների մասին, ավանդապատումների, արցախահայության արարչագործ էության ու խառնվածքային գծերի, ազատասեր ոգու մասին :

Քննելով Մեծ Հայքի տասերորդ նահանգը, Ջալալյանցը հատկանշում է պատմական միջավայրի, տեղանքի բացահայտումը հետևյալ կերպ. «Ըստ այժմյան բաժանման Արցախ նահանգը բաժանված է յոթ մասի կամ, ըստ այլազգիների՝ մահալի: Դրանք են՝ Իկիրմիդորտ, Չրբերդ, Խաչեն, Վարանդա, Մնիզակ, Բաչգբասան և Մղավուզ, որոնց հիշատակության արժանի [վայրերի մասին] կգրենք, ըստ հերթականության» [4, էջ 154-155]:

Հեղինակը թվարկում է Ջեվա, Հոռեկ, Ջրվշտիկ գյուղերի և նրանց վանքերում արված ու պահված արձանագրությունների մասին փաստեր՝ կատարելով նաև տեղագրական, աշխարհագրական քննումներ, Աղվանից աշխարհի արքայական տան մասին բացահայտումներ: Ջրվշտիկի դերը կարևորելով, Ջալալյանցը խոսում է հոգևոր կառույցների մասին, ընդգծում Աղվանից Վաչագան արքայի ու նրա կառուցումների մասին արժեքավոր

հաղորդումներ. «Հոռիկից ոչ հեռու գտնվող գյուղ է. մոտակայքում՝ դժվարանցելի ձորի մեջ, Եղիշե առաքյալի վանքն է, որը կառուցել է Վաչագան Աղվանից արքան: Սրա եկեղեցին սագաշեն է, կառուցված անհարթ ու մեծ քարաբեկորներով. երկարությունն ու լայնությունը ութական կանգուն են: Եկեղեցուն կից անշուք գավիթն է, որի ներսում, բացի այլ շիրիմներից, նաև ուխտի առաջնորդ Մելիքսեթի դամբարանն է, ում սպանեցին արաբները Հայոց ՌՃԴ (1104) թվականին: Եկեղեցուն կից փոքրիկ մատուռ է, որում Պարտայի Վաչագան արքայի գերեզմանն է» [5, էջ 156] :

Մի կողմից պատմական, տեղագրական, կառուցողական սահմանագծումներ, մի այլ կողմից արցախագիտական, ճարտարապետական սքանչելի արարումների, գեղարվեստական հետաքրքիր անցումների կողքին, հայ ժողովրդի, արցախահայության ռազմական հանճարի անուրանալի բազմաթիվ դրսևորումներ կան Ջալալյանցի գրչի տակ անմահացած: Ահա մի օրինակ Արցախի նշանավոր մելիքներից մեկի մասին. «ՄԱՅՐԱՔԱՂԱՔ Ավերակ քաղաքատեղի է, դժվարանցանելի ձորում, որտեղ բազմաթիվ տների մեծամեծ ապարանքների ավերակներ կան: Այստեղ է Մելիք Ադամ քաջ ու հզոր իշխանի պալատն՝ իր սքանչելի ճարտարապետությամբ: Սրա կողքին ընդարձակ արվարձան է, որ ծառայել է պալատի պահպանությանը: Այս պալատից վեր Հայոց ՉԹ (709) թվականին, Ռուսուքանի իշխանության, Փախրադանի ամիրության և Տեր Սուքիասի առաջնորդության [օրոք]՝ Խուռումի և իր եղբայր Վահրամ շահի կառուցած սագաշեն մատուռն է» [6, էջ 158] :

Պատմաաշխարհագրական արցախյան միջավայրի շարասյունը պատմության հիշողությունների մատյանն է թերթում ու բովանդակալից անունների շարք արձանագրում՝ վերակենդանանալով հեղինակի քննությամբ, հայրենաճանաչում արձանագրելով՝ Երից Մանկանց վանքի արձանագրություններ, Չարդախլու, Նորաշեն, Կսապատ, Մոխրաթաղ, Շուշի, Գանձասար և նրա արձանագրություններից կտորներ և այլն:

Ծանոթագրություններ

1. Դավթյան Հ., Ուղեգրությունը որպես հայրենիքը վերակերտելու ուղիղ ճանապարհ, տե°ս Ջալալյանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Երևան, «Դալլ» հր., 2016 (այսուհետեւ՝ Դավթյան Հ.) :

2. Դավթյան Հ.:
3. Ջալալյանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Երեւան, «Դալլ» հր., 2016 (այսուհետեւ՝ Ջալալյանց Ս.) :

4. Ջալալյանց Ս.:
5. Նույն տեղում :
6. Նույն տեղում :

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ջալալյանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, Երեւան, «Դալլ» հր., 2016:

РЕЗЮМЕ

Философия ознакомления с родиной и концепция существования Арцаха. Саргис Джалалянц, «Путешествие по великой Армении»

Зинаида Балаян

Ключевые слова: «Путешествие по Великой Армении», литература Арцаха, Вачаган – владыка мира из Агвана, Гандзасар, Церковь Казанчецоц в Шуши.

Создавая композицию «Путешествие по Великой Армении», Саркис Джалалянц руководствовался такими важными предпосылками, как доведение до сознания армян программы восстановления своей родины, претворения в жизнь своего видения реальности, пересмотра ее границ, возможности обладания всею ею вновь. Знакомясь со всеми уголками Родины, в своих рассказах о них он старался как можно точнее передать историю разбросанных по всему миру армянских центров. Одним из таких примеров является, в частности, обращение к истории Арцаха: описание разнообразной жизни арцахских армян, политической судьбы меликов Арцаха, представленное в жанре эпико-исторического описания.

SUMMARY

Philosophy of acquaintance with the homeland and the concept of existence of Artsakh. Sargis Dzhalalyants, "travel across great Armenia"

Zinaida Balayan

Key words: "The travel across Great Armenia", Artsakh's literature, Vachagan - the king of the World from Agvan, Gandzasar, Kazanchetsots Church in Shushi.

In the composition "Travel across Great Armenia" the author Sarkis Dzhalalyants was guided by such important prerequisites as bringing to consciousness of Armenians of the program of restoration of the homeland, implementation of their vision of reality, revision of its borders, possibilities of possession of all it again. Getting acquainted with all corners of the Homeland and creating stories about them, he tried to transfer stories of the Armenian centers scattered worldwide as much precisely as it was possible. In particular, the appeal to Artsakh's history was represented as the description of various spheres of the Artsakhi Armenians` life, the political fate of meliks of Artsakh which had been written in a genre of the epiko-historical description.